

պարտական էր բողոքել դրա դէմ: Այդ ժամանակը գտնելը ընդ. ժողովը վճռէր (և իմ կարծիքով՝ անպատճառ կը վճռէր) կանոնադրութեանը աւելացնել այդ §-ը և խնդրել պաշտօնապէս թոյլտուութիւն Մ և ծ ի չ խ ա ն փ ո խ ա ր ք ա յ ի ց :

Չը գիտեմ՝ ինչու և ինչպէս պատահեց, որ անցեալ տարուայ ընդ. ժողովի առաջին նստի արձանագրութեան մէջ (որը հրատարակվեց «Փորձ» ամսագրում) այդ խմբագրութիւնը բոլորովին փոխված էր....

Այսպէս թէ այնպէս այս տարվայ փորձը կարծեմ բաւականին ցոյց տուցեց և ա ն դ ի դ ա տ ն ե ր ի ա ն հ ր ա փ ե լ ա տ ու թ իւ ռ ւ ը :

Մի նկատողութիւն ես. ցանկալի է, որ ընդհանուր ժողովին ներկայ գտնվին միայն ընկերութեան անդամները (իբրև վճարողական ձայն ունեցող) և ոչ մասնաւոր անձինք: Գտնեց անցեալ տարի այս կամ այն ինչ պատճառով չէր կարելի կամ յարմար չը գտնվեցաւ կայացնել առաջին ընդ. ժողովը միմիայն ընկերութեան անդամները և այդ եղաւ պատճառը որ, որքան ինձ յայտնի է, մինչև 7—8 մարդ ընտրողական ձայն ունեցան, այն ինչ մինչև այսօր էլ չեն վճարել անդամակցութեան վճարը: Իմ կարծիքով, այդ անձանց ցուցակը վարչութիւնը պարտական է ներկայացնել ընդհանուր ժողովին իր տարեկան հաշիւ հետ:

Կանոնադրութեան 8 §-ի ժամօթութիւնը թէ, «այն ի ս կ ա կ ա ն անգամ, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իր տարեկան վճարը, համարվում է ընկերութեան անդամակցութիւնից հրաժարված» չէ կարելի բացատրել այնպէս իբր թէ ամեն մի մասնաւոր անձին միջոց է արվում գալ ընդ. ժողովին, մասնակցել ընտրութիւններին և հետևաբար առանց անդամակցութեան վճարը վճարելով, ասելով, որ նրանց կանոնադրութեան 8 § հիման վրա վեց ամիս ժամանակ է արուած: Գարձեալ կրկնում եմ, որ այդ յօդուածում ասած է, «այն ի ս կ ա կ ա ն անգամ» և այլն... ուրեմն իսկական անդամը նախ ընթաց տարի պէտք է անգամ լինել, որովհետև ամեն մարտի 9-ին սկսվում է տպագրական նոր տարին (մարտից մինչև մարտը), իսկ ընդհանուր ժողովի նիստի օրը մինչև ընտրութիւնները անցեալ տարուան վարչութեան անդամներ չեն կարող նոր ի ս կ ա կ ա ն անդամները ընտրել: (Ընկերութեան համար, ասում եմ ես, տպագրական տարին հաշվում է մարտի 9-ից մինչև)

Թի, թէ չըջախց գիւղերի բոլոր գլուխները, բոլոր նաղարայինները, միասին հաւաքված, կադմէ էին մի անագին նուազախումբ: Չուռնայի գիւղ. ճիւղում, ակա՛նջ ծակող ձայնը, նաղարայի վաղրենի զրմբըրըրը, միախառնվելով, զրդեցնեւում էին լեռները մի խառնածայն, անախորժ ներդաշնակութիւնով, թէ ե զ ա բոլորին դուր էր գալիս, բայց այն լեռները վրա արածող ոչխարներին, որոնք խրջելով, սկսան այն կողմ և այն կողմ փախչել, և բացի հովիւների չնրից, որոնք այդ անախորժ աղմուկը լսելով, սկսեցին դառն ձայնով ոռնալ, սկսեցին հեծկլաւ, կամ բարկացած կերպով հայել: Այդ խառնուած արաբաժները, երևի, աւելի կիրթ ճաշակ ունէին, քան թէ ամբարը, որ այդ միջոցում հիացած էր այդ տարբերակ երաժշտութիւնով:

Նուազախումբը բոլորից առաջ էր ընկած և ասում էր: Նրանց ետեղի հանդիսաւոր կերպով բերում էին այն անասունները, որ այսօր պիտի մրցութիւն անէին միմեանց հետ: Նախ բերում էին մեծ պարունի երեւել խոյը, կապված մի երկայն շղթայով, որի մէջ տեղը անց էր կացրած խոյի պարանոցով, իսկ շղթայի երկու ծայրերը լսնել էին երկու ուժեղ մարդիկ: Նրա անագին, յորտապարտու եղջիւրները ներկել էին վարդի գունով և զարդարել էին փոքրիկ զանազանքով: Նոյն գունով, խաղաճամուռ կերպով, ներկել էին նրա մարմնի սպիտակ բուրդը: Մեծ պարունի խոյի ետեղ բերում էին Արջի թաւաղի որդու խոյը, նոյնպէս շղթայով կապված, նոյնպէս զարդարած փոքրիկ զանազանքով, այն զանազանութեամբ միայն, որ զրա թէ բուրդը և թէ եղջիւրները ներկված էին կապուտ գունով և ոչ վարդապէս, որ միայն մեծ պարունը իրաւունք ունէր գործ անելու իր անասունների վրա *):

*) Նոյն սովորութիւնը կայ և պարսից մէջ: միայն թաղաւոր և թաղաւորացիները իրաւունք ունեն իրանց ձիաների պոչը և բաշը ներկել վարդի գոյնով:

հետեալ տարուայ մարտի 9-ը և այդ ժամանակամիջոցին ընդունված անդամները, լինեն դրանք ընդունված մարտին, յուլիսին, հոկտեմբերին՝ մի և նոյն է, վճարած տարեկան անդամակցութեան վճարը հաշվում է մինչև առաջիկայ տարուայ մարտի 9-ը և այդ օրից նրանք, և թէ ցանկաւում են իրանց անդամակցութեամբ օգուտ բերել մի աղղային հիմնարկութեանը, նորից վճարելու են անդամակցութեան վճարը մինչև հետեալ տարուայ մարտի 9-ը և այլն:

Ուրեմն թէ անցեալ տարի մի քանի անձինք օգուտ քաղեցին հանգամանքներից (որովհետև ընկերութիւնը նոր էր կազմակերպվում) և անիրաւ վարվեցան, այս տարի գոնէ այդպիսի երեւոյթները չը պէտք է տեղիք ունենան և դրա առաջին առնելու համար ես կառաջարկէի վարչութեանը այս տարուան հրաւիրատուներում խնդրել ընկերութեան անդամներին իրանց հետ բերել և ընկ. ա ն դ ո Ր ր ա գ ի ը ն ե լ, որոնք ցոյց կը տան որ նրանց ներկայացնողները իրաւ ընկերութեան իսկական անդամներ են:

Վերջացնելով իմ այս երկու խօսքս չեմ կարող չը յիշեցնել ընկերութեան վարչութեանը, որ ամեն տեսակ ընկերութիւնների սովորութեան համեմատ, հաղիւ թէ աւելորդ լինի օր առաջ յայտարարել այն հարցերի ցուցակը, որ նա իր կողմից առաջարկելու է ընդ. ժողովին և ի հարկէ ցանկալի է, որ այդ ցուցակը ունենայ ոչ թէ մի պաշտօնական ձև (այլ խօսքերով ասած՝ չոր ու ցամաք), այլ, որքան հնարաւոր է, բացատրած պէտք է լինի:

Միւրա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են: «Վերջին տարիներում տեղի ունեցած մեծ թանցութիւնը և նրանից առաջացած տնտեսական նեղութիւնը ստիպեցին մեր գիւղացի ժողովրդին նորից դիմել բարեկեան տէրութեան օգնութեանը: Այս միջոցին տասնական խնդիրներ չէրան լքողմթիւ գիւղերից ներկայացրած են կարսի նոր նաճանգաւոր գեներալ Գրօսմանին, թոյլտուութիւն խնդրելով կարսի նաճանգը դադարեցնել: Ժողովուրդը կարծես բնազդաւորով զգում է, որ այս նաճանգաւորը աւելի բարեկեան է լինի և Նորին կայսերական Բարձրութեան կողմանէ փոխարքային խոնարհաբար կը խնդրի իր բարձր պաշտպանութիւնը չը

վանալ Թագաւոր կայսրի հարկբաւոր հաւատարմ և աշխատասէր հպատակներին միջոց տալու իրանց աշխատանքով հողերը մշակելու:»

Պ. բժիշկ Նաւասարդեանց խնդրում է մեզ յայտնել, որ «Հայոց բարեգործական ընկերութեան» ժողովի վերջին նիստը, որ նշանակված էր կիրակի օր, մարտի 8-ին, Արժուտութեամբ օրնում, չը պէտք է կարողանայ կայանալու, այն մեծ և խորին սղի պատճառով, որ յանկարծակի տիրեց ամբողջ կայսերութեան մէջ: Մի այլ, յարմար ժամանակին յարգելի հասարակութիւնը հրաւիրված կը լինի նոր յայտարարութեամբ:

ՕԴԻՍՍԵՅՑ մեզ գրում են: «Ստեփան Սաֆրալեանց, որ Ողեսայի համալսարանի ուսանող էր և յաճախ թղթակցում է աշխատակցում էր «Մշակին», յունվարի 23-ին ներկայ թիւ փախճանկեցաւ ուղղի բարբոսութեց: Յունվարի 25-ին հանգուցեալի ընկերները հանդիսով թաղեցին երկտասարդին, զարդարելով նրա դագաղը ծաղկեայ պսակներով: Տխուր է, երբ այդ տեսակ հասակում մեռնում է մի երիտասարդ, որ ամեն կերպ անտեսական և բարոյական նեղութիւններ կրելով, անխնայ աշխատում էր, ուսում էր առնում, երազելով մի ժամանակ օգտուէտ լինել իր ազգին:»

Մի թիֆլիսեցի պարսն պատում է մեզ հետեւեալը: «Իմ հարեաններս ամեն օր վաղ առաւօտեան, երբ ես դեռ հալիւ լուսաղլի, հանգիւնել եմ, բախում են արդէն տնեակին դրանք և պահանջում են այն առաւօտայ «Մշակի» համարը: Նրանք բոլորն էլ, ձեռքից ձեռք խլելով, մեծ հետաքրքրութեամբ կարդում են «Մշակը»: Բայց երբ մի օր ես նրանց հարցրի թէ ինչի չեն առնում հինգ կօպէկով լրագրի համարները մօտակա խառնութեամբ, որտեղ «Մշակը» հատով է ծախվում, նրանք պատասխանեցին թէ հինգ կօպէկով թանգ է: Նոյն անձինք ամեն գիշեր մեծ փողոց են ծախում կլորներով, կամ ժամանակ տա ժամանակ գնում են Օրթոմալայի այգիները և այնտեղի չուայ քէֆերի ժամանակ ընծայում են մի օր և դուռնաշուկ կամ պարկերով քան և հինգական բուրբխներ Այդպէս է թիֆլիսեցի հայը. անհրաժեշտ համար, միտաւոր զարգացման համար, նա խնայում է օրական 5 կօպէկ, ասելով թէ թանգ է, իսկ անբարոյական քէֆի, չալայութեան համար, հարկը բուրբխներ չի խնայի: Ի՜նչ առաջնադիմութիւն կարելի է սպասել այդ տեսակ անբարոյական ժողովրդից:»

ԱՐԳՈՒՆԻՑ մեզ գրում են: «Գեր լրագրի անցեալ 1880 թիւ № 225 մէջ կարդացինք իբր թէ Արդուշին հայկաթօրկները այն աստիճան մոլեռանդ են, որ մի հայկաթօրկի մանկալարձ կին հրաժարեցրած է եղել կաթօրկ հողերաւանութեան հրամանով կաթօրկ եկեղեցու գրից, որովհետև օգնութիւն էր հասցրել մի

պիտի մի սրտաշարժ կերպարանքով, կարծես, նա առաջին անգամ հանդիպում էր հին բարեկամին, մտերիմ ընկերոջը, երկար տարիների անջատումից յետոյ: Նա պատարաստվում էր գրկվել սիրելի անասունի հետ, համարել նրան, բայց նրա իղձը անկատար մնաց, որովհետև այդ ժամանակ սե ձիաւորը բաժանվելով իր խումբից, մի անխնայութեամբ վրա հասաւ, և մտրակի հարուածներով նրան հեռացրեց, գոչելով:

— Խղի գաւալ, ինչու ես նեղացում չաւրեմ...

Թէ ես անքերը կապած էին, բայց խելացի անասունը, կարծես, զգաց թէ ով էր իրան մօտեցողը, մի անհանգիստ շարժում գործեց, գլուխը շուտ տուցեց, ուղղում էր վազել նրա ետեղի, փաթաթվել նրա ոտներով, յայտնել իր սէրը և կարօտը, բայց նրա շղթայից բռնող երկու ուժեղ մարդիկը թոյլ չը տուցին: Ստեղծող շան նախկին տէրը, գիւղացի Լենտոն էր, որ սե ձիաւորի մտրակներից զարհուրած, սասանված, այժմ կրել էր ամբարի մէջ:

— Լեցիք ինչ ասեց նրան մեծ պարունը, — լսեցիք, հարցնում էին միմեանցից ռամիկները:

— Վնց չը լսեցինք, պատասխանում էին միմեանց, — ասաց խղի գաւալ... Հիմա ինչ կը փրկի Լենտոն, որ մեծ պարունը նրան ասաց խղի գաւալ...

Լենտոնի կերած մտրակները հաշուի չէին առնում, բայց նրան բախտաւոր էին համարում, որ նա պատիւ ունեցաւ լսելու մեծ պարունից մի այդպիսի փաղաքական խօսք...

Զիւռաւորի խումբը, նուազածուները և մըրցող անասունները արդէն հասել էին գետի ափին մօտ: Գիծ կուրը այս տարի գարնան յորդ անձրևներից, սովորականից աւելի վարարվելով, բարձրանալով, իր պղտոր ալիքները տարածել էր ափերից շատ հեռու: Իսկ այնտեղ, ուր պիտի կատարվէր հանգիստը, նա սեղանած էր մի նեղ

հայուսաւորական ծննդեանից: Այդ լուրը մենք կարդացինք մեծ ապշուքով: Բանի որ այդ տեսակ դէպք ոչ այժմ և ոչ առաջ երբեք պատահած չէ Արդուշին մէջ: Ընդհակառակն մեծ ներգաշտիւթներ է տիրում քաղաքին երկու դաւանութիւնների հայ հասարակութիւնների մէջ: Գրողի նպատակը միայն երկու դաւանութիւնների մէջ թշնամութիւն սերմանելու կարող է լինել: Թող դրողը հաստատէ իրողութիւնը, ապա թէ ոչ այդպիսի զրպարտութիւններ ոչ միայն մեր ազգի, այլ և օտարաց վրա վատ ազդեցութիւն կարող են ունենալ և նրանց մեր մասին գէշ դադարաւ տալ:

Անցեալ տարի դեկտեմբերին թուրք աւաղակները կտորեցին Նաթթուղից 8 վերտ հեռու գտնվող հայոց Նաթիկ-Վանքը տանելով մինչև 300 բուրդ գումարի իրեղեններ: Մեզ պատմում են որ այս օրերս, շնորհով Ղարաբաղի պրոտավ պ. Լիւդվիկի 5 թուրքեր կանանաւորվեցան, բերկեցան Թիֆլիս և բաշտարկվեցան: Նաթիկ-Վանքը կտորեցան իրեղեններ մի մասը գտնված է: Ընթերցողին յայտնի է որ Գերջին երկու ամիսներում Թիֆլիսում էլ կտրված են եղել բաւական երեւոյթներ, բայց մինչև այժմ Թիֆլիսի պոլիցիան ոչ մի աւաղակ չը կարողացաւ գտնել և կայանաւորել:

ԳՈՒՇԵԹԻՑ մեզ գրում են: «Մեր փոքրիկ և նահապետական քաղաքը միայն գրանով էր բաղդաւոր, որ նրա մէջ երբեք գործութիւն չէր պատահում: Բայց ահա մի ամիս չը կայ օր երկու խոշոր գործութիւնների պատահեցան մեզ մօտ. երկու տուն կտորեցին և նրանց մէջ գտնված բուրդ կայքը տարան: Այս դժբաղդութեան առաջին առնելու համար հարկաւոր է մի քանի կապաճաւոր և անցածուր չունեցող անձինք հեռացնել Գուշեթից, մեր ամբողջ քաղաքում գտնված եօթ թէ ութ լապտերները ուղղել նրանց վրա այնքան էլ աւելացնել, նրանց վառել ինչպէս հարկն է և պոլիցիային էլ պատուիրել գիւղերը հսկողութիւն ունենալ:»

Ստացանք ԲԱԳՈՒԻ «Վարդապետական» ընկերութեան 1880 թիւի գրամական հալիւ և պարտաւորութիւն ենք համարում ասել—թող չը նկատայ մեզ վրա «Վարդապետական» ընկերութիւնը, —բայց մեզ անհայտն է տպել մեր լրագրում այդ տեսակ անագին հաշիւներ: «Մշակի» միակ արդիւնքը յայտարարութիւնների բաժինն է, իսկ տպելով յայտարարութիւնների երեսի վրա մի հալիւ, որ չորրորդ երեսի գիծի կէտը կը բռնի, մենք այն օրը կը գրեկնէք մեր լրագրի իր սովորական արդիւնքից:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԻԻՍԻՑ մեզ գրում են, որ այս տեղի Սրբ. Գրիգորիոսի հեղինակաւոր կերպով տօնվեցաւ Վ ա Ր Գ ա ն ա ն ց յիշատակը: Տէր-Մեարք քահանայն տօնին յարմար քարոզ ասեց:

Ճորի մէջ Այս պատճառով զայրացած կուրք, խելագարի նման փրփրելով, մռնչելով, իր կատաղի կոհակները առաջ էր մղում, սփռելով իր շուրջը մի խուլ, որոտածայն գոլորտ:

Ի՜նչու էին ընտրել այդ աղմկալի ձորը: Ուրի պատճառ չը կար, բայց նրանից, որ այդ ձորի մէջ, մի բլուրի զազաթի վրա դեռ մնացել էին աւերակները մի հին ամուռու, ուր ամեն տարի, կանաչ կիւրակէի օրը ժողովուրդը սովորութիւն ունէր ուխտով գալ և հանդես կատարել: Չեմմանաղ գիւղացիները, իրանց ընտանիքների հետ, մի քանի բարակ մուկը իրանց գոտիների ծայրին ցցած, գիտում էին զէպի մատուռը: Ումանք, որ աւելի ունեւոր էին, մի—մի ոչխար էին տանում մատաղի համար:

Մատուռի աւերակները, ինչպէս ասեցինք, գտնվում էին մի բլուրի գագաթի վրա: Այդտեղից երևում էր նրա ամբողջ գեղադրական շքեղ փառքը: Մեծ պարունի գերդաստանը, մի քանի ավանական ընտանիքների հետ, դեռ շատ վաղ առաւօտեան եկել, տեղաւորվել էին մատուռից փոքր ինչ հեռու, գարեւոր ընկուզենիների հովանիների ներքոյ տաքածված գորգերի վրա: Կանանց վերմուստիւթները այդ գեղաւոր գերակշռում էր իրանց ամուսնիների կրօնական զգացմունքներ: Իշխանական տան կնիկները, դեռ արեւը չը ծագած, եկել էին ոտքով իսկ նրանց ամուսնիները եկան յետոյ, սիւրբազան նոյնքների վրա նստած: Աւելի հասարակ արարածների կընիկները եկել էին բուրբի ոտներով:

— Մեծ պարունը եկաւ, ասաց այն օրվայ օտանախմբութիւնը կառավարող արեւդան իր եկեղեցական գասին, —գնանք ընդունելու չը տայն

Լուսնը ոչ չափաւ որոյ մի փնտ այլ ընթացիւ առ քաղաքս անմոռ (կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՒ ՏՕՆԱԽԲՈՒԹԻՒՆԸ

„Порядок“ լրագրի փարիզի թղթակիցը գրում է հետևեալը. Հետաքրքրութեամբ և մի և նոյն ժամանակ անհամբերութեամբ անցնում էի ես Աստղերի հրապարակով, մոտենալով էյլստեան փողոցին, կամ, ինչպէս Ֆրանսիացիք ասում են, դ'էյօ փողոցին, որտեղ ապրում է բանաստեղծը։ Դեռ ևս 11 ժամ չը կար, և մինչև տօնախմբութեան սկսվելը դեռ երկու ժամ մնում էր։ Որք մօայլ և խոնարհ է։ Հրապարակի վրա ժողովուրդը կանգնած է առանձին խումբերով։ Յրիգները շրջում են աղաղակելով. „մեղայններ ի յիշատակ Վիկտոր Հիւգօի տօնախմբութեան“։ Յաղթական կամարի մոխրագոյն վիթխարի կամարների տակ հաւաքվում են զանազան երաժշտական ընկերութիւնները դրօշակներով, որոնց գլխին կախված են մեղայններ։ Հեռուից լսվում է Մարսելիկի ձայնը։ Դեպի Աստղերի հրապարակը տանող բազմաթիւ փողոցներով անցնում են ժողովրդի ջրված խումբեր։ Ամեն բան կարծես դանդաղ է երևում, և ես մինչև անգամ կարծում եմ, որ տօնախմբութիւնը չի յաջողվի։ Տօնախմբութեան պրօգրամն կայանում է նրա մէջ, որ պետք է հանդիսաւոր կարգով անցնեն բանաստեղծի պատուհանի առջև, — բայց ո՞վ։ Ամեն բան կախված է ժողովրդի մասնակցութիւնից, բայց ժողովուրդը դեռ ևս չէ երևում։ Միտում է բարակ և սառը անձրև գալ։

Ահա և դ'էյօ փողոցը։ Մուտքի մօտ կանգնեցրած է կամար։ Երկու կողմից վիճակաւոր առաքատներ, պատատած պատկերով, արմաւենու ծիւղերով, զարդարված երեք գոյնի դրօշակներից կազմված վահաններով և փաթեթի տակտակներով, որոնց վրա գրված են բանաստեղծի բոլոր գրուածքների անունները։ Վերև, առաքատները միացած են լայն կարմիր ժապաւէնով բանաստեղծի անունով և նրա ծննդեան և յօբելանի թւերով։ Ահա և ամբողջ կամարը։ Ամբողջապէս վերցրած կամարը մի անսակ դեղին գիւղ և ուրախ տպաւորութիւն է գործում։ Համեմատելով այս շնչին բանը Յաղթական կամարի քարակոյտի հետ, ակամայ ժպտում ես։ Ո՞րք այս երկու կամարներից յարաւել է։ — Հարցնում ես ինքը քեզ։

Փողոցի վրա բաւականին խաղաղութիւն է տիրում։ Մի քանի տեղ, մեծ մասամբ մասփաճանների խառնութեան վրա, որոնք զարդարված են բարկինդանի պատճառով, դրօշակներ են ցցված։ Վերջապէս ժողովուրդը խառնում է։ Ես բանաստեղծի տան առաջն եմ կանգնած։ Այլ կողմը փաթեթի, երկյարակների տուն է վերնատունով։ Մուտքի առաջ երկու շինարկներ են կանգնած, որոնց ծոցները հիւսված են արմաւենու ծիւղերով։ Երկու կողմերում զրկված են կենդանի ծաղիկների փունջեր — ծաղիկները թիւ չունեն։ Դրան առաջը դրված են ոսկե դափնեայ պսակ, հասարակագիտութեան բրօնզեայ կիսարձան — և էլ ի մէկ ինչ որ պայծառ բան։ Հանդէպի տան պաշտպանի վրա կանգնած է աղամարդիանց մէկ խումբ, որոնց մէջ ես որոշում եմ նստելի կոտորած, փաթեթի պատկերը։ Այս տեղերը վարձված էին Չորս կողմն ահագին ամբոխ է։ Այ մէկ պոլիցիական չը կայ։ Այս անգամ նրանց դերերը կատարում են մամուլի ներկայացուցիչները, որոնց կարելի է ճանաչել իրանց կրած նշաններով և փունջերով։ Նրանք շրջում են, ժողովրդին երկու կարգ կանգնեցնելով, ծիծաղում են, ներողութիւն են խնդրում։ Մէկը նրանցից, մի երկուս

սարգ Ֆրանսիացի, սաստիկ զրավից իր դերով և ցաւեցնելու չափ դիպչում է մարդկերանց։ Առաջ երկու զամեններ են կանգնած, որոնցից մէկը առանց լուրու շատախօսում է և ամենքին ծիծաղեցնում է։ Ամբոխը յանկարծակի աճում է։ Ամբողջ փողոցի վրա, ինչքան ես կարողացայ տեսնել, ժողովուրդը կանգնած է երկու կարգ։ Յանկարծ երկուրդ յարկում բացվում է պատուհանը — և երևում է բանաստեղծի այնպէս զրուլը և նրա թոռները — ծաննի և ծորժի փաթեթի գլուխները։ „Վիկտոր Հիւգօ“ — լսվում են ժողովրդի բարձր աղաղակները։ Մերումնին ձեռքով է անում, ողջունում է, ժպտում է։ Մէկ ծանր լուր թիւն է տիրում։ Ամբոխը և բանաստեղծը նայում են միմեանց վրա և չեն իմանում, թէ ինչ անեն։

Ահա թէ մօտիկից ինչ տեսք ունեն ժողովրդական մեծ ցոյցերը, մտածում եմ ես, և վճռում եմ, որ Վալտերի տօնախմբութիւնը ևս, որի մասին այնքան հետաքրքրութեամբ կարգացել եմ զբերում, իսկապէս, երևի, սրան ման մի բան է եղել։

Պատուհանը փակվում է և մինչև անգամ վարագոյնները իջնում են։ Ամբոխը աճում է և անհամբեր է դառնում։ Ոտներու մըրտում են։ Անձրևը կրկին սկսում է դալ։ Վերջապէս ձանձրալի սպասելուց յետոյ, աղաղակներ են լսվում. „վերջապէս“։ Ընդհանուր լուրթեան մէջ յայտնվում է հասակաւոր մարդկանց մէկ խումբ նշաններ ունեցող գլխարկներով, սրանք քաղաքային խորհրդի անդամներն են։ Մտանալով բանաստեղծի տանը, նրանք գլխարկները հանում են, ամբոխը հետևում է նրանց օրինակին և ամենքի բերանից կարծես ակամայ և անսպասելի կերպով դուրս են թռչում ողբերգական աղաղակներ։ Կեցցէ Վիկտոր Հիւգօ։ Մերումնին իր երկու թոռների մէջ տեղ կրկին յայտնվում է պատուհանում և ձեռքով է անում։ Քաղաքային խորհրդականի անդամները, չը նայելով ցրտին և անձրևին, բաց գլխերով մօտենում են պատուհանին։ Վիկտոր Հիւգօն ծոցից հանում է քառաձայ մէկ թերթ և սկսում է կարդալ։ Սկզբում ոչինչ չէ լսվում, յետոյ ես զանազանում եմ մի սրտձայն, մինչև անգամ մեթոդիական ձայն, որը ինչ որ խօսում է Եւրօպայի և Ամերիկայի մասին, յիշում է Բեյլինը, — բայց այստեղ բանաստեղծը թաշկնալը մօտեցնում է աչքերին, արտասուքները թափվում են դէմքի վրա, — կրկին ոչինչ չէ լսվում։ Ամբոխը զգածված է և ինչքան ոյժ ունի ծափահարում է։ Ինձ վրա վատ տպաւորութիւն է գործում, որ ծանա և ծորժ նոյնպէս ծափահարում են նրան իրանց փաթեթի ձեռքերով, — երևում է որ նրանց սպիտակեցրել են այդ բանը. կը փչացնեն նրանց, մաճում եմ ես, ցաւով նայելով նրանց դեղնեցիկ և աշխոյժ դէմքերի վրա։

Այդ րոպէին մօտիկ լսվում են Մարսելիկի հիւսիսները, երևում է դրօշակ և ժողովրդի խումբ բազմութիւն դանդաղ մօտենում է... Ես դժուարանում եմ արտայայտել այս րոպէի ապշեցնող ազդեցութիւնը։ Ամեն բան յանկարծ փոխվեցաւ։ Արանանալու փայլիկներ, որպէս մրիկի վրա հասաւ յանկարծակի, անսպասելի, ինչպէս միշտ պատահում է այսպիսի մեծ հանդէսների ժամանակ։ Սկզբից սկսւորիկ կերպով տրամադրված, դեռ չը կարողացայ փոփոխութիւն նկատել իմ արտաբերութեան մէջ, որ արդէն արտասուքներ սկսեցին թափվել աչքերիցս, — մի և նոյնը պատահեց և ինձ շրջապատողների հետ։ Այդ նախապատրաստված չէր այս տեսարանի

համար, ամենքը տեսան նրան առաջին անգամ։ Տեսնելով այս ամբոխը, որը հանդիսաւոր կերպով և խորին յարգանքով անցնում էր ութսունամեայ, բայց դեռ քաջ ծերունու առջև, ես միանգամից հասկացայ այս տօնի վեհութիւնը և նշանակութիւնը, որ սկզբում ինձ համար մութն էր մնում։ Գլխում անցկացան մի քանի վառ մտքեր, որոնք, որպէս արեգակի ճառագայթներ, լուսաւորեցին առաջս կատարվող բոլոր անցքերը...

Այս ծերունին պատերազմական ոչ մէկ յաղթութիւն չէ արել, ոչ մի կաթիլ աւրին չէ թափել, ոչ մէկ այլի կամ որք չէ թողել, — բայց այնու ամենայնիւ հպարտ ժողովուրդը կամաւորապէս խոնարհեցնում է նրա առաջ իր գլուխը...

Այո՛, առաջ տեսնում եմ ոչ թէ դատարկաբջիկների մի խումբ, այլ „ժողովուրդ“ այս սրբազան խօսքի ամենարժան նշանակութեամբ։ Նրանցից իւրաքանչիւրը ոչ միայն գիտէ իր առաջին բանաստեղծի անունը, բայց, երևի, կարգացել է շատ նրա գրուածքներից, և շատին էլ բերան դիտեն։ Բախտաւոր բանաստեղծ։ Բախտաւոր ժողովուրդ։

Այժմ իրադրութիւնն է մի ուրիշ համաշխարհային բանաստեղծի մեծ խօսքերը. „Die Weltgeschichte ist das Weltgericht.“ Ես տեսնում եմ մարդկային բարձրագոյն արդարութեան գործողութիւնը, ժողովրդական տրիտուրի պատկերը։ Դեռ ևս դա՛ զաւի մէջ չը դրած առաքինութեան վրա պսակ է գնվում... Մինչև այժմ այդպիսի լուծումն տեսել եմ բնի վրա և այդ ինձ երևում էր անարգ, բայց որքան արտաշարժ և ուրախալի է նա կեանքի մէջ։ Ինչ քաջալիքով օրինակ է նրանց համար, որոնք նոյնպէս սիրում են ժողովուրդը և որոնք պատրաստ են տալ իրանց հոգու բոլոր ուժերը և սրտի բոլոր արիւնը նրա համար։ Եւ ինչքան մեծ նշանակութիւն ունի մեծ ծերունու այս անշարժ սնդորութիւնը, որը բարձրից քաղցրութեամբ ժրպտում է ամբոխին, որը իր կողմից շարժվում է ցածում, միշտ ալեկոծվելով, միշտ փոխվելով, բայց միշտ խորին յարգանքի և երախտագիտութեան զգացմունքով բարձրացնում է իր աչքերը դէպի նա։

Եւ նա արժանի է այս պատկերին։ Թող հակաձուլվեն նրա տաղանդի յատուկութեան մասին, թող ասեն որ նրա լիբերալ կան բանաստեղծութիւնները գուրկ են պարգւթիւնից, դրամները — ճշգրտութիւնից և րամանները — բնականութիւնից, բայց նա մեծ է նրանով, որ նա իր ահագին ընդունակութիւնից և ոչ մէկ մասը չը թողնէ հոյի մէջ, և նրանով, որ նա այն քերից մէկն է, որոնք չեն ամաչում խօսել արտասուքից աչքերով դէպի մարդկութիւնը և սիրում էր — նրա մէջն է կայանում նրա երկարատե կեանքը, որը հարուստ է անցքերով և փոթորիկներով, տանջանքներով և փառքով — մի խօսքով ամեն բանով, բացի նախախնիքից։

Ահա այն զգացմունքները և մտքերը, որոնք յանկարծակի պատեցին ինձ, տեսնելով այս բազմաթիւ ժողովրդի տեսարանը, որ հանդիսաւոր կերպով անցնում էր ութսունամեայ բանաստեղծի մօտով։ Մարսելիկի հիւսիսներին ներդաշնակութեան ազդեցութեան տակ։

Ընկերութիւն անցնում էր ընկերութեան ետեւից, պատգամաւորութիւն պատգամաւորութեան և օրկեստրը օրկեստրի ետեւից։ Բոլոր ընկերութիւնների թիւը հասնում էր 300, մօտ 101 միայն երաժշտական

ընկերութիւններ էին, 140-ից աւելի „chambre Syndicales“։ Եւ այս պատգամաւորութիւններ մամուլի կողմից, ուսումնականներից, ուսանողներից և այլն, և այլն։ Հանդէսը մօտ երեք ժամ է տևում, կարծես վերջ չունի։ Կարգադրողները սաստիկ դադրում են։ Մէկը նրանցից դառնում է մեզ և պարծենում է, որ ի՞նչ այստեղ պոլիցիան լինէր, — չէր կարող ժողովուրդին այսպէս կարգով կանգնեցնել։ Բայց երկու րօպէ չանցած, ամբոխը շարժվեցաւ և ինձ ամբոխի հոսանքը հետաքրքրեց բանաստեղծի տանից, որ այժմ բոլորովին ծածկված է ծաղիկներով։ Հեռանում եմ և տեսնում եմ պատուհանում, այժմեանից արդէն պատմական անձն դառած, Պարնելի այրական գլուխը։

Մօտիկ փողոցներով ես յետ գնացի։ Աստղերի հրապարակը դեռ ևս լինէ է ժողովուրդով։ Ամբողջ փարիզը այնտեղ է։ Այն միլիոնից աւելի մարդիկ մասնակցեցին տօնախմբութեանը։ Ուրախ ծիծաղը լսվում է ամեն տեղից։ Լսվում են երաժշտութեան ձայներ։ Կադրած, ես թողնում եմ հրապարակը։ Գլխում ակամայ հետեւեալ հարցն է ծագում. այս մեծ բանաստեղծը և քաղաքային, որը իր ամբողջ կեանքում խօսել է բարոյականութեան մասին, զոնէ մտազաւթ բարոյականացրեց իր ժողովուրդին։ Եւ այս ճշմարիտ դեղիցիկ տօնախմբութիւնը կը դարձնէ արեւօք այս հարիւր հազարաւոր մարդկերանցից զոնէ մէկին աւելի բարոյական և աւելի մաքուր, քան թէ էր երէկ այս ժամանակ։

Որպէս պատասխան իմ ծածուկ խորհրդածութեան, աչքիս են ընկնում յայտաւարութիւնների սիւները, որոնց վրա մէկ արշինանոց տառերով գրված է „La fête de Victor Hugo“, իսկ կողքին մի թատրոնական աֆիշա, որի վրա նոյնպիսի արշինանոց տառերով գրված է „Nana“։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋՈՂՊՈՒՅԻՆ ԲՆԱԿԵՐՈՒԹԵՒՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 5 մարտի։ Ի Տէր Հանգուցեալ Կայսրի մարմնի տեղափոխելը կը կատարվի մարտի 7-ին Նիվա գետի առօրե փրայով։ Այն տեղը, որտեղ մահացաւ կերպով վիրաւորվեցաւ Փաղաւորը, յանկարծաւոր է։ Դուան վճռել է արձան և մատուռ կառուցանել։ Յայտնեցաւ, որ Բիսկոփ յայտնի փաճառական Գրոմօփի զործակաւորի որդին է։ „Новое Время“ լրագիրը կարծում է, որ եղևնագործութեանը շատ մարդիկ էին մասնակցում և տեղաւորվել էին քաղաքի զանազան կողմերում։ Պաշտօնապէս հայտարարում են, որ լիցիային գէնը ձեռքին ընդդիմադրող անձը այն բնակարանի մէջ, որտեղից Բիսկոփ և նրա ընկերը ստացել էին ճայթող ուղւթեր, Մոնթենիսկայա նահանգի, Սիւնիսկայա դաւառի գիւղացի է, Տիմօֆէյ Միխայլով անունով։ Նա մասնակցել է պատրաստական աշխատանքներին եղևնագործութեան համար։ Կայսրաւորվածի թղթերի մէջ գտնվեցան Նիկաթրինսկայա ջրանցքի և Մալայա Մալոփայա փողոցի ներկարդիները։ Բացի այդ պօլեցիան յայտնել է զատասանական իշխանութեանը, գիւղացի Կորօզովի պանրամաճառի խանութից Մալայա Մալոփայա փողոցի վրա անհետացել են տէրերը, մալք և կին, թողնելով կատարված հողային աշխատանքների հետքեր Կորօզովի բնակարանը և մօտակայ խանութը խուզարկելու ժամանակ գտնվեցաւ մինչև փողոցը հասցած մի փոքր վաճառական։ „Страна“ լրագրին երկրորդ նախազգուշութիւն է տուած ՁՅ 27-ի մէջ տպված առաջնորդող յօդուածի համար, իսկ „Голосъ“ լրագրին տուած է առաջին նախազգուշութիւն ՁՅ 63-ի մէջ տպված երկրորդ յօդուածի համար։ Այս տարով նշանակված է խորին սուգ, որ չորս քառորդի վրա է բաժանված։

Խմբագիր — հրատարակող ԳԵՐԳՈՐ ԱՐՔԵՐՈՒՆԵՐ

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԵՄՈՐՈՒԿԵԱՆ ԲՈՒՍԵԿԱՆ ՀԵՂԵՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆեսոր բժշկի ԿՐԸՏ-ԿՕՎԱԿՈՒՑ շատ զեղեցի միջոց է **ՍՏԵՄՈՒՐՍԻ ԶԱՆԵՐԵՆՆԵՐ** զեմ, մաքրում է և շատացնում է **ԼՐԻԻՆԵՐ**, վերականգնում է **ՄԵՐՄԵՆԻ** ընդհանուր հարմանան, մանաւանդ՝ առաջարկվում է **Հիմարի** և **Իպա-խանդրիա ՀԻԼՆԻՈՒԹԵՆՆԵՐ** զեմ: Մի շնոր, գործա-ծելու **ԽՐԸՏՆԵՐՈՎ**, 1 ր. 80 Կ: Օտարաքաղաքացիք ուղարկում են **ՓՕՍՏԻ** ծախար: Ծախվում է **Ռուսա-տանի ԲՈՒՈՐ ԴԵՂԱՏՆՆԵՐԻ** մէջ և զեղերի պա-հետներին մէջ: Պահեստը Մօսկվայում է, Ն. Մատենեյնի մօտ, Տվերսկայա փողոց: Կիշնեովի մէջ Կայուշանակու և Բայունշտեյնի մօտ: Վարչակայի մէջ **Ա. Փ. Գալլէի** մօտ: 25—25 (5)

Ա Ն Գ Ի Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ

Հաւանական թէյի ֆունտը	1 ր. 5 Կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Փ. 1 ր. 30 Կ.
—	1 ր. 10 Կ.	—	Փ. 1 ր. 40 Կ.
—	1 ր. 20 Կ.	—	Փ. 1 ր. 60 Կ.
—	1 ր. 40 Կ.	—	Փ. 1 ր. 80 Կ.
—	1 ր. 60 Կ.	—	Փ. 2 ր. —
—	1 ր. 80 Կ.	—	Փ. 2 ր. 50 Կ.
Ամենալաւը	2 ր. —	—	Փ. 3 ր. —
53—100			

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ**, մաքրող ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադար-ձնող: Գինը 2 ր. շնոր, **ՓՈՍՏԱ-ՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 Կօպ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԻԻՆԱՅԻ ԻԿ**, մաքրող ամրացնող հա-մար, 1 ր. ամենը վրձին գլխա-ցաւի զեմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱ-ՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 28—100

ՌՈՒՍԻՈՅ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵԻ-ՏՐԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Ստացուեցաւ ուղղակի գործարանից Բամ-սոն Սիմա և Հէյթի, երկաթէ գուլթաններ, երեք անիւներ, ամենազովված տեսակից, որոնք արդէն ընդունուած են ամեն տեղ մանաւանդ Երևանի նահանգում: Իւրաքան-չիւր գուլթանի արժէքն է երեք խոփի—85 րուբլի, իսկ գուլթանով առնողներին զիջումն է լինի: Նոյնպէս ստացուեցան երկրագոր-ծական զանազան մեքենաներ, և մեծ քա-նակութեամբ Ամերիկայի և Եւրոպայի զանազան տեսակ ապրանքներ: Մաքաղի-նում պատուէր կընդունի ամեն տեսակ մեքենաների և այլ ապրանք թէ Ամե-րիկայից և թէ Եւրոպայից բերել տալու մասնաւոր աշխատանքով: Հասցէն. Դժո-րցօվայա փողոց գալերէյ Արծրունի, Տրե-խիս: 9—10

ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՀ-ՃԱԿԱԼՆԵՐԻ, մատուցարանների, կող-պէքների, գրիչների, թղթի, հրացանների, ատրճառանների, բաժանների, ցիտրատ-մաղ-նեղիայի, կօնֆէկանների, մուրաբայի և այլն ծախվում են Ա Ն Գ Ի Ի Ա Կ Ա Ն մ ա գ ա լ ի ն ու մ:

Նոյն տեղը **ԾԱԽՎՈՒՄ ԵՆ** պալտո-ներ 12 րուբլուց, բրնձներ 4 րուբլուց, արիւս արշինը 70 Կօպէկից, տարեկանը 12 րուբլուց հաւոր, կեանտիւնան թէյ զարնանը հաւաքած ուղղակի պալտատու-ներին 1 ր. 10 Կօպէկից մինչև (ամենալաւը) ֆունտը 2 րուբլի առանց թղթի, մակին-տօշներ 8 րուբլուց, և մուրաբայի մէկ վա-զօնը 85 Կօպէկով: 4—12

Մինչև այժմ չեղած **ԵԿԱՆՔԻ ԻԿ**, ԲՈՒՐԿ ԸՄԻԹՏԻ, որ կատարելագործված է բժիշկ **ՄԵՎՐԻ-ԿԻԻ ԴԵՅԶԻՑ**: Ըողջացնում է ամեն տեսակ խո-լովի-ԹԻՆ, եթէ նա բնական է: Երեւոյ ԲՈՒՐԿ ԸՄ-տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ Շ Շ այդ իւրից, մանրամասն խրճատներով, գործածութիւն մասին: Եյդ իւրը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-ՆԵՐԻՑ և Լէքսանդր ՎԵՆՅԵԼԻՑ, Կազանկայա փողոց № 3: 38—52

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

144 Արծրունու գալերէյա 144
ամենալաւն պահեստ
մեքենի և հայելիների:

2ր նոյնիով մաքրելի աւելանալուն ապրանքները առաջվայ գինով կը ծախվին. **ԿՕՆԳՈ-ԹԵՑ** 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 Կօպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիւսնայի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և **ՍՄԵՆԱԼԱԻ** **ԹԵՑ** 2 ր. առանց թղթի: Անգլիական բէլգիկներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵ-ՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂ ՊԵՔՆԵՐԸ**, ջօնսօնի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաօ-շօխալի ծախելու համար, որոնք վարկի հանդիս ժամանակ ոսկէ մեղալ ստացան: **ՀՈՏԱԼԵՑ ԹԵՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՑԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 Կ. և ամենալաւը 2 ր. 30 Կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կօնֆէկաններ հազի զեմ 60 Կ. ֆունտը: 36—100

- Կենտրոնական գրաւաճառանցում ի միջի այլոց վաճառվում են հետեւեալ գրքերը:
1. Արուստ երկայնակեցութեան, որ է ստոյղ, երկայն ու երջանիկ ապրելու ու-սումը: Շար. բժ. Փօփովիչ. գ. 1—50 Կ.
 2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նախնական դպրոցաց: Հեղ. տ. Գառնո, գ. 1 ա.
 3. Հռչակաւոր ոճիրք: Պրէնկլիէ Մարքիզուհին: Պատկեր. վեպ. Ա. Գիւմա, գ. 1 ա.
 4. Գիււաքնակ բլուր: Վ. Ե. Իօթէն Սիւ 2 հ. գ. 2 ա.
 5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վերն 3 հ. բովանդակութիւն տ. հ. Օղապար նաւաբերներ. բ. հ. Բնկեցիկ մարդը. գ. Կղզւոյն Գաղանքը գ. 3 ա.
 6. Աշխարհի շրջան ութսուն օրուան մէջ: Հեղ. Ժիւլ Վերն գ. 1—50 Կ.
 7. Բարիքն յԱմերիկա: Հեղ. Բ. Լաբուէ 2 հ. գ. 2 ր.
 8. Պարզը կամ առնումն Նիուէի. գրեաց ծեր. Գ. Պատկանեան գ. 50 Կ.
 9. Թուղթ Մարկոսի Աղաբէգեան Հայոց Աշխարհի Ազգի և եկեղեցու, աղ-դայութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս Պատրիարքն հա-յոց գ. 2 ր. 25 Կ.
 10. Հ. Ղ. Ալիշանեան: Տեղագիր հայոց Մեծաց գ. 2 ր. 50 Կ.
 11. Նուէր Կաղանդի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպէրեանի գ. 65 Կ.
 12. Քնարիկ մանկան. Աղէք. Արարատեանցի գ. 40 Կ.
 13. Տարերք իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հա-տոր գ. 3 ր. 50 Կ.
 14. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ֆօթէր օր. Գաղիացոյ գ. 1 ր.
 15. Ընտիր Հայկազունք: Պատկերազարդ կենսագրութիւնը գ. 2 ր. 75 Կ.:

Նոյն տեղը վաճառվում են հայերէն, ռուսերէն և օտար լեզուների դասագրքեր, դասական պիտոյքներ, աշխարհագրական քարտէզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն:

Օտարաքաղաքացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետեւեալ հասցէին. Թիֆլիս, Въ Центральную Книжную Торговлю. Ծանալ. Ծախք պէտք է աւելացնել իւրաքանչիւր ր. 10 Կ.:

ՍԱԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄԻ ԲՈՒՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑ-ՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՅԹ ԲՈՒՐԿԵԼԻ. ԻՒՆԵԼ ԷԹԻՄԻ թոյլ են տուած **Մօսկվայի ԲՈՒՐԿԵԼԵՆ ՓԵԿՈՒԼՏԵՏԻՑ**: Եյդ միջոցները մեծ ԳՈՐԾԵԻՐՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և ա-ռաջարկվում են իբրև **ԵՄԵՆԱԼԱԻ** առողջապահական ՄԻ-ՋՈՑՆԵՐ բերանի և առամենների համար: Կարելի է ԵՏԵՄ-ՆԵՐԸ պահպանել **ՓՕՇԻՆԵԼՈՒՑ**, սառեցնում են **ԼՕՐ-ՉՈՒՆԻՑԻ ԲԵՐԸ** և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Ետամաքոյթ բժիշկ **Ե. Է. Եղեհեյի** ԳԼԵԼՈՐ ՊԸ-ՀԵՍՏԸ գտնվում է **ՄՕՍԿՎԱՅՈՒՄ**, ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿԵ-ՄՈՒՐԸ, ՍՕԿՈԼՈՎԻ տանը:

ԹԻՖԻՍՈՒՄ կարելի է գտնել **Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ** ԿՈՎԱԿԱՆԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԸ-ՀԵՍՏՈՒՄ: Ծախողների ՆԸՆԵԼՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: 15—30 (11)

ԻՆՁ Է ՊԱՏՃԱՆՈՐ ՈՐ ԱՆԳ-ԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մա-գաղինը ստանում է թէյ ուղղակի պալտ-ատուներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականա-նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովո-րաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-սակի, կակաօ և շօխալ-ֆրայ, մուրաբա և կօնֆէկաններ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէ-վոյկներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-մաններ, դանակներ, գզալներ, թէյաման-ներ, բաժաններ, թամբեր, գոլպաններ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մախիմոշներ, կարկնիք, թուղթ, մատիա-ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեւի համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-ժան քան թէ ուրիշ տեղ: Արծրունու գալերէյում: 100—59